

Մամլոյ Հաղորդագրութիւն

ՄԱԿ-Ի ՊԱՐԷՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ Կ՛ՕԺԱՆԴԱԿԷ Հ.Բ.Ը.Մ.- ԻՆ՝ ՔՈՎԻԾ-19-Ի ԴԷՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ ՈՒ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԱՔԵԼՈՒ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ

Դեկտեմբեր 28, 2020թ.

Անմիջապէս Հրատարակութեան Համար

Քանի որ հայաստանեան հիւանդանոցները եւ խնամքի հաստատութիւնները անդու կ'աշխատին սպասարկելով Արցախեան պատերազմին ընթացքին վիրաւորուածներուն, համաձայն Հիւանդութիւններու վերահսկման եւ կանխարգիլման կեդրոններու, Քորոնավիրուսով վարակման աստիճանով երկիրը հատած է չորրորդ մակարդակի սեմը: Սովի եւ մարդասիրական ճգնաժամերու վերացման ուղղութեամբ աշխատող ամենահին գործակալութիւնը աշխարհի մէջ՝ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Պարէնի համաշխարհային ծրագիրը (WFP), Հ.Բ.Ը.Մ.-ին առաջարկեց համակարգել Պելճիգայի Լիեժ քաղաքէն մաքսային բեռի քանի մը խմբաքանակի առաքման համեմատական աշխատանքները, ըստ որուն, բեռներու հսկողութիւնը պետք է իրականացուի Հ.Բ.Ը.Մ. Եւրոպայի Մասնաճիւղի, իսկ ստացումը՝ Հ.Բ.Ը.Մ. Հայաստանի Ներկայացուցչութեան կողմէ. քորոնավիրուսով հիւանդացածներու թիւը այդ պահի դրութեամբ կը գերազանցէր 150,000-ը: Առաքման հետ կապուած բոլոր ծախսերը ստանձնեց Լիեժի մէջ WFP-ի գրասենեակը, իսկ Քովիտ-ի հետ կապուած անձնական պաշտպանիչ սարքաւորումը ու օժանդակ պարագաները սիրայօժար նուիրաբերեցին Պելճիգայի հայ համայնքի անդամները:

«WFP-ն հպարտ է Հ.Բ.Ը.Մ.-ի պէս պատմական եւ ամենահաս կազմակերպութեան հետ գործընկերութեան համար: Հ.Բ.Ը.Մ.-ի եւութիւնը, ինքնին, որպէս համայն հայութեան համար այնքան կարեւոր միջազգային ժողովրդական կազմակերպութիւն, կը նշանաւորուի WFP-ի հետ ծանրակշիռ համագործակցութեամբ», - ըսաւ WFP-ի Լիեժի գրասենեակի գործառնական ղեկավար Հիէն Աճէմեանը: «Մենք հպարտ ենք, որ կը մատուցենք ծառայութիւններ, որոնք կ'օգնեն Հ.Բ.Ը.Մ.-ին հասնելու աւելի մեծ թիւով մարդոց եւ փոփոխութիւն մտցնելու անոնց կեանքին մէջ: ՄԱԿ-ի հետ համագործակցութիւնը դէպի այդ փոփոխութեան ճանապարհին առնուած քայլ մըն է, եւ WFP-ի Լիեժի գրասենեակը յուսով է, որ այս փորձը գործնական նշանակութիւն կ'ունենայ հետագայ համագործակցութեան համար», - ընդգծեց Աճէմեանը:

Համավարակի պայմաններուն մէջ մատակարարումներու նախաձեռնութիւնը սկսած է 2020թ. Հոկտեմբերի սկիզբին եւ կը շարունակուի մինչեւ Յունուարի կէսերը: Պրիւքէլի «Հայ տուն» Հայկական Մշակութային Կեդրոն Նախագահ Կարէն Թադէուսեանի համակարգումով, հաւաքած, կազմակերպած եւ փաթեթաւորած է տարբեր իրեր եւ նիւթեր: Ի թիւս այլ մարդոց, Պելճիգայի հայ համայնքը ներկայացնող բարերար Նանի Կաչերիսեանը անձամբ յատկացուցած է 614 քիլո անձնական պաշտպանութեան միջոցներ՝ յաջակցութիւն Հայաստանի առողջապահական աշխատողներուն: Շուրջ 42,827 քիլո (43 թօն) պարագաներ կ'առաքուին Հ.Բ.Ը.Մ. Հայաստանի գրասենեակ, որոնք կը ծառայեն հայ ժողովուրդի կարիքներուն: «WFP-ի շնորհիւ, եւ

Պեղծիգայի կամաւորներու աջակցութեամբ, մենք կրնանք առողջապահական համակարգի մեր հերոսներուն եւ Հայաստանի մէջ գտնուող ՔՈՎԻԾ-19-ով հիւանդներուն առաքել այնքան անհրաժեշտ օգնութիւնը», - նշեց Հ.Բ.Ը.Մ. Եւրոպայի նախագահ Նատիա Գործունեանը:

Հ.Բ.Ը.Մ. Հայաստանի գրասենեակը ստանձնեց բեռի ստացումը Երեւանի «Զուարթնոց» օդակայանէն: Առաքանին կը պարունակէր առողջապահական եւ մարդասիրական բնոյթի շարք մը պարագաներ, ինչպէս՝ անձնական պաշտպանութեան միջոցներ, պատրաստի յատուկ բուժական սնունդ, անզգայութեան սարքաւորում, անուասայլակներ, բժշկական յենակներ, մարմնամարզական սարքաւորում, հագուստ, կօշիկ, քնապարկեր, սնունդ եւ ախտահանիչ պարագաներ՝ շուրջ 490,301 Ամերիկեան տոլար արժողութեամբ:

Վայրէջքէն անմիջապէս յետոյ Հ.Բ.Ը.Միութիւնը բեռը բաշխեց հետևեալ կերպ. անձնական պաշտպանութեան պարագաները ուղարկուեցան անմիջապէս Հայաստանի Առողջապահութեան նախարարութիւն: Հագուստը, կօշիկները եւ ծածկոցները, ինչպէս նաեւ ախտահանիչ պարագաները ուղարկուեցան Հայաստանի արտակարգ իրավիճակներու նախարարութիւն: Իսկ 16,000 քիլո սնունդը կը մնայ Հ.Բ.Ը.Մ. Հայաստանի գրասենեակը եւ կը յատկացուի երկրի ամբողջ տարածքին մէջ ապրող կարիքաւոր հայերուն:

«WFP-ի այս առաքանիները անչափ կարեւոր էին Հայաստանի համար այս վճռորոշ օրերուն: Մենք նաեւ երախտագիտութեամբ կ'ընդունինք Հ.Բ.Ը.Մ. կամաւորներու եւ անձնակազմի անձնուիրութիւնը, որոնք համակարգեցին իրենց գործունէութիւնը եւ համագործակցեցան՝ ապահովելու համար այս միջազգային նախաձեռնութեան խնամքով, արդիւնաւետ եւ թափանցիկ իրականացումը», - նշեց Հ.Բ.Ը.Մ. Հայաստանի նախագահ Վազգէն Եագուպեանը՝ աւելցնելով, որ Հ.Բ.Ը.Միութիւն վերահաստատեց մարդասիրական օգնութիւն հասցնող յուսալի եւ բանիմաց գործընկերոջ իր համբաւը:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (Հ.Բ.Ը.Մ.) աշխարհի մեծագոյն ոչ-շահամէտ հայկական կազմակերպութիւնն է, նուիրուած հայեցի ինքնութեան եւ ժառանգութեան պահպանումին եւ մշակումին՝ կրթական, մշակութային եւ մարդասիրական ծրագիրներով: Միութեան գործունէութիւնները բարերար ազդեցութիւն կը բերեն տարեկան 500,000-է աւելի անձերու կեանքերէն ներս, Հայաստանի ու Արցախի մէջ եւ Սփիւռքի տարածքին: Իր հիմնադրութենէն ի վեր, Հ.Բ.Ը.Մ.ը հաւատարիմ մնացած է համայն հայութեան բարօրութեան ապահովումին ուղղուած իր գլխաւոր առաքելութեան: Յաւելեալ տեղեկութիւններու համար՝ այցելեցէք www.agbu.org կայքէջը:

Յաւելեալ Տեղեկութեանց համար - Կապ

AGBU Press Office

55 East 59th Street

New York, NY 10022-1112

Phone: 212.319.6383

Email: communications@agbu.org